



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

244

1060

Бюджетомъ лага-
рьескаго Училищъ.

1864 г.

201B

2013

2009

ԳԵՐՄԱՆԻԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԿՆԵՐ

САНКТ-ПЕТЕРБУРГ

Свободный

литературный

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 28 апраля 1864 г.

376
5

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅ

1060

ԸՆՍԿՆԵՐ

64

ԵՎԵՍՏՈՑ ԳՐԻՄՄԱՑ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ՀԱՒԱՔՈՒՄԾ

Թարգմանութիւն Ֆրանսիականէն

Ե-այէ Տէր Գրեգորէանց:

ՏԵՏՐԱԿ Ա.



Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

1864

ЗО 701-4.2

Mr. **Фишеръ К. А.** Сибирь

По Офицерской улицѣ (напротивъ Демидова сада), домъ № 46.



1060-2013
7.8.1855

(4988)
38

(13832-58)

ՅԵՒՍՀԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Այս գրքոյկը , որի գլխագրից պարզ երևում է , նշանակած է երխայոց համար , և չէ շարադրութիւն մի առանձին հեղինակի , այլ գործ ամբողջ աղգի՝ երկու ուսումնական եղբարց ձեռքով հաւաքուած , կոկած և տղայոց ճաշակին յարմարեցուած : Որքան այդ աշխատութիւնը կարող է օգտակար լինել երեխայոց կրթութեան՝ կրտեսնենք վերջը : Առաջ կըկամենայինք պատասխան տալ այն հարցին , որ անշուշտ կ'առաջարկեն մեղ մեր ընթերցասէրք և մանկավարժք , այսինքն՝ „ ինչո՞ւ համար ընտրեցինք թարգմանելու այդ երևակայական առակները , պարիկներով , կախարդներով և գաղաններով զարդարուած գիրքը . ինչո՞ւ մոռացանք , որ պարիկները , կախարդները և առ հասարակ երևակայական ստեղծուածները վնասակար ու ոխերիմ թշնամիք են գիտութեան , առել է՝ և կրթութեան :

Այս տեսակ հարցեր քանիսից լսեցինք.
շատերից խորհուրդ անգամ ստացանք չի
թարգմանելու այդ, մեր կարծիքով, սլա-
տուական գիրքը: Ի հարկէ, ամենայն մարդ
իրաւունք ունի ասելու այն, ինչ որ մտա-
ծում և կարծում է, որպէս և լսողը աղատ
է ընդունելու նոցա ասածը, եթէ իւր կար-
ծիքի և համոզման ընդդէմ չէ. և կամ
մերժելու, եթէ ընդդէմ է, հաւանական չէ:
Այսպէս, մենք ես ունենալով և վայելելով
այդ աղատութիւնը և հաւաստի լինելով
մեր լնտրած գրքի գեղեցկութեան ու օգ-
աակարութեան վերայ՝ կը համարձակուինք
ասել մեզ հարցանողներին, որ կախարդ-
ները և պարիկները գործիք են մեր ձեռ-
քում տղայոց ուշ ու միաքը գրաւելու հա-
մար. ինչու որ, միայն այդպիսի պարզ,
գիւրըմբոնելի, նոցա տարիքի և հասկա-
ցողութեան պատշաճ միջոցներով, կարելի
է շարժել նոցա հարցասիրութիւնը և հեշ-
տութեամբ հաղորդել այս և այն Ճշմար-
տութիւնը կախարդների բերանով: Միթէ
չի պատահել ձեզ տեսնել ինչպէս երեխայք
կախարդի անուն լսածին պէս՝ կը ցատկեն
կը կանգնեն, աչքերը մեծ կը բանան և ա-
կանջները սրելով՝ կը պատրաստուին անա-

սելի համբերութեամբ լսել պառաւի երկար ու ձիգ, շատ անդամ անխմաստ հետեւել: Այդ միջոցին քանի համբոյր, քանի գորուանք և քաղցր ժակիտ՝ բաղդաւորութիւն է ունենում այդ խեղացած և չորացած պառաւը նոցանից ստանալու: Ո՞րքան աղաչանք և պաղատանք է լսվում զորս կողմից, որ յանձնառու լինի կըրկնել այդ անձունի, անսկիզբն և անվախճան հերքեաթը: Զէ՛ մէ՛ որդիքս, ասելով և տեսնելով ընդհանուրի ուրախութիւնը, դարձեալ բարեհաճում է երկրորդել իւր հերքեաթը, բայց թուլութեան ու յոգնութեան պատճառով ինչ ասածը խեղճը ինքը չըդիտէ. այս տեղից այն տեղից քաշքշելով, փետփուելով մի բան ասում է, աշխատում է չըվիրաւորել նոցա, որ միւսանդամ-էլ գան խնդրել սլատմել, տախտակ ձեռքը և թումած թուշերը համբուրեն, և կարծ ասել՝ ուշ դարձնեն այդ կիսակենդան կընամարդու վերայ:

‘Երողամիտ տղայքը չեն բողոքում, նոքաբաւական են նրանով ևս, որ լսեցին սատանայի, թագաւորի և կախարդի անունը, մնացածը մի ակնթարթում կըլրացնեն իւրեանց վառվուն երևակայութեամբ: Ահա՛

տեսանում էք որպիսի դիւթական ներ-
գործութիւն ունի երեխայոց վերայ պա-
ռաւի անձոռնի և խանգարուած սուսկը.
բայց եթէ այդ առակների մէջ պարունա-
կուած և ծածկուած լինէր բարոյականու-
թիւն, Ճշմարտութիւն, մարդասիրութիւն,
բարեգործութիւն, պարզամտութիւն, սէր
միաբանութեան, և այլն. այն ժամանակ
ո՞րքան օգուտ երեխայոց, ո՞րքան խըրատ
և օրինակ նոցա մաքուր սիրտերը մաքուր
սլահելու, աղնիւ, Ճշմարտասէր և բարոյական
մարդ դարձնելու: Այս ասածներիս Ճշմար-
տութիւնը կարծում ենք անհերքելի և ըն-
դունելի ամենեցուն: Մեր թարգմանած
գիրքը, որ գրեթէ բոլոր Եւրոպայի աղ-
դերը թարգմանել են իւրեանց լեզուով և
և արդէն քանի քանի անգամ տպագրել
են, կարող է սլարծենալ բոլոր վերոյիշեալ
յատկութիւններով, ուրեմն և իրաւաբար
լինել օգտակար և գեղեցիկ դիւտ մեր
երեխայոց համար, ուզում էինք ասել՝ երե-
խայոց գրականութեան, բայց դժբաղդաբար
գեռ ևս այդ նախանձելի բառը գործածելու
իրաւոնք չունինք, ըստ որում մեր խեղչ
երեխայքը միայն երկու հատ ու կէս գիրք
ունին կարդալու, դոքա ևս աննպատակ

գրուած։ Աւրախութեամբ և անխախ առաջարկումնք մեր սիրելի տղայոց և աղջկանց այս Գերմանացւոց երկու ուսումնական եղբարց երկասիրութիւնքը։ Եթէ հաճելի լինի մեր այս առաջին վորձը՝ որ, տարակոյս չըկայ, շատ պակասութիւններ ունի, ուրախութեամբ կըշարունակենք թարգմանել և լոյս ընծայել այդ ուսումնականների առակների լաւագոյնները։ Մեր աշխատութեան վարձքը պիտի լինի մեր սիրելի Հայ տղայոց և օրիորդաց օգուտը, որ կարող են քաղել այս տկար վաստակից։ Համոզուած ենք, որ գանձանակը մեր չնչին լումայով չի հարստանալ. բայց երբ այդպիսի լումաները օր ըստ օրէ շատանան, այն ժամանակ մի գումար կըհաւաքուի, որը, անտարակոյս, բանի պէտք կըգայ։ Թող հարուստները և ունկորները շատ ձգեն, ոսկի դրամներ ձգեն. մենք շատ ուրախ և շատ շնորհակալ կըլինինք. բայց և թող երբէք չարհամարհեն աղքատի անկեղծ ու բաց սրտով ձգած լուման։

Թարգմանել :

ԱՌԱԿՆԵԲ

1

Պարեներէ ողարժելը :

Ան դերձակ և մի դարբին միասին Ճանապարհորդում էին : Մի երեկոյ, երբ արել մայր էր մտել սարի քամակում, նոքալսեցին երաժշտութեան ձայն, որ քանի մօտանում էին՝ այնքան պարզվում էր : Աա մի անսովոր եղանակ էր, բայց այնպէս քաղցըր, այնսլէս գեղեցիկ, որ նոքա մոռանալով բոլոր խրեանց յոգնութիւնը ուղևորուեցան մեծ քայլերով դէալ ի այդ կողմը :

Լուսինը արդէն բարձրացել էր երկնակամարի վերայ, երբ նոքա հասան բլուրի մօտ, որի վերայ մի բաղմութիւն կարձահասակ այր և կին մարդկանց ձեռք ձեռքի բոնելով շրջանակ կազմած՝ պար էին գալիս. դոքա մի և նոյն ժամանակ հնչեցնում էին օդը գրաւողական երգերով, որոնց

ձայնը լսելով մեր ճանապարհորդները դարձել եկել էին այդ կողմը։ Մէջ տեղումը կանգնած էր մի ծերունի՝ փոքր ինչ բարձր ուրիշներից, գոյն զգոյն զգեստ հագած և բոլոր կուրծքը ճերմակ մօրուքով ծածկած։ Երկու ուղեկիցք զարմանքից անշարժ մնացին, նայելով կաքաւիչների վերայ։ Ծերունին նոցա նշանայի արաւ մտնելու և կարձուկ կաքաւիչները բացին շրջանակը։ Դարբինը մտաւ առանց այլևայլութեան, նորակոնակը փոքր ինչ բլրածեւ էր, ուստի և նա համարձակ էր ինչպէս բոլոր սապատողք։

Դերձակը առաջ փոքր վախեցաւ և մընաց յետևումը. բայց տեսնելով ընդհանուրի ուրախութիւնը՝ ոյժ առաւ և մտաւ. իսկոյն շրջանակը փակուեցաւ և փոքրիկ ստեղծուածները սկսեցին երգել, պար գալ վերվեր թռչկոտելով։ Իսկ ծերունին, հանելով գօտուց կախած մեծ դանակը, ըսկսաւ սրել. երբ բաւականին սրեցաւ, դարձաւ դէալ ի անձանօթների կողմը. իսեղձերի լեզուները վախից պապանձեցան, բայց այդ վախը երկար ըստեւց. ծերունին բըռնեց դարբինը և ձեռքի մի շարժուածքով բոլոր նորա մազը և մօրուքը ածիլեց, յե-

տոյ նոյնը արաւ դերձակին։ Երբ որ սլքր-
ծաւ այդ գործողութիւնը, բարեկամաբար
զարկեց նոցա ուսերին կարծես թէ կամե-
լով յայտնելու, որ նոքա խոչեմութիւն
արին, որ թողուցին առանց յանդիմանու-
թեան ածիլել և նոցա վախը ցրուեցաւ։
Յետոյ նա մատով ցոյց տուաւ կոյտ ածուխ,
որ նոցա մօտը դիղած էր և նշանացի արաւ
լցնել այդ ածուխով իւրեանց գրպանները։
Երկուքն-էլ հնազանդեցան՝ չիմանալով թէ
ինչ բանի պէտք կըդան դոքա, և շարունա-
կեցին ճանապարհը գիշերելու համար մի
իջևան գտնել։ Երբ հասան հովիտ, վանքի
զանդակը զարկեց տաններկու ժամ, խոկոյն
երգեցողութիւնը դադարեցաւ, ամենայն
ինչ աներեւութացաւ և նոցա աչքի առաջ
մնաց ամայի հովիտը լուսինով լուսա-
ւորուած։

Երկու ճանապարհորդք գտան մի իջե-
ւան և պառկեցան յարդի վերայ ըհա-
նուած. խոկ ածուխները նոյնպէս մոռացան
հանելու յոգնութեան պատճառով։ Այս
անսովորական բեռը, որ նոցա շատ ծան-
րացնում էր, սովորականից կանուխ վեր-
կացրեց։ Նոքա տարան ձեռքերը գրպան-
ներին և չէին հաւատում իւրեանց աչքե-

բին, աեստնելով գրաւանները լիով ոչի
ածուխով, այլ զուտ ոսկուով։ Մօրոքները
և մաղերը նոյնպէս մեծացել են։ Այսու-
հետև նորա հարստացած են, միայն դար-
բինը ըստ իւր ժլատ բնաւորութեան բեր-
նէրերան լցրել էր գրաւանները, ուստի
նորա ձեռք բերածը երկու անգամ աւելի
էր դերձակից։ Բայց ագահ մարդը երբէք
չէ բաւական իւր ունեցածովը և միշտ կը-
կամենայ աւելի ունենալ։ Այսպէս ժլատ
դարբինը առաջարկեց դերձակին մի օր
այլ ես սպասել, և վերադառնալ երեկոյին
ծերունու մօտ, որ էլի վող առնի և տուն
բերի։

Դերձակը մերժեց, ասելով, իմ ունե-
ցածս ինձ բաւական է, ես շատ գոհ եմ,
միայն կըցանկամ լինել դերձակապետ և
ամուսնանալ իմ չքնաղ առարկային հետ
(այսպէս կոչում էր նա իւր հարսնացուն)
և ես կըլինիմ այն ժամանակ բաղդաւոր
մարդ։ սակայն իւր ընկերին սիրութեցա-
ւեցնելու համար համաձայնեցաւ մի օր
էլ մնալ։

Երեկոյին դարբինը առաւ ձգեց իւր
ուսերի վրայ երկու պարկ մեծ աւար տուն
բերելու յուսով և ընկաւ ճանապարհ դէպ

Եթուրը։ Ինչպէս նախընթաց գիշեր, կառահայտակ մարդիկը դուրս ելան երգելով և պար դալով։ Ճերունին նորան դարձեալ ածիլեց և նշանացի արաւ ածուխ առնելու։ Մեր ժլատը առանց երկար մըտածելու լցրաւ իւր գրպանները ու պարկը որքան որ կարելի էր, վերադարձաւ ուրախ ուրախ տուն և չըհանուած պառկեցաւ։ „Երբ իմ ուկիս կըսկսէ ծանրաբեռնել, ասաց նա, իսկոյն կըզգամ“։ և քուն եղաւ վերջապէս մեծ յուսով առաւօտեան Կրեսոսի պէս հարուստ զարթելու։

Աչքերը բացուածին պէս՝ սյցելութիւն արաւ իւր գրպաններին. բայց ո՞րքան չի խառնեց, որքան չի փնտոեց, բացի սև ածուխից ոչինչ չըգտաւ։ „Գոնէ, մտածում էր նա, ինձ մնում է երեկ գիշերուայ ձեռք բերած ուկիս“։ Գնաց տեսնելու, բայց աւազ. այդ ուկին նոյնպէս ածուխ էր դարձել։ Սևացած ձեռքը տարաւ ճակատին և զգաց որ գլուխը ճաղատ ու ածիլած էր, որպէս և կզակը։ Սակայն դեռ ևս նորան յայտնի չէր անբաղդութեան մեծութիւնը. շուտով նկատեց որ քամակի կուզին մի ուրիշ կուզ աւելացել էր առաջից։

Այժմ զգալով որ այդ պատիժը իւր ա-

գահութեան համար էր ստացել, սկսաւ
աղիողորմ ձայնով լաւ։ Բարեսիրտ դեր-
ձակը, զարթելով նորա աղաղակից, միսի-
թարեց կարողութեան չափ և ասաց. „Մենք
ընկերակիցք էինք և միասին ճանապարհոր-
դեցինք. մնացի՛ր ինձ հետ, իմ գանձը եր-
կուքիս-էլ բաւական կը լինի“։

‘Ես կատարեց իւր խօսքը. բայց դար-
բինը ստիպուեցաւ մինչև մահը երկու կուզ
կրել և ծածկել իւր անմաղ գլուխը գլւ-
խանոցի տակ։

2

ԵՐԿԵԼԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ.

Ժամանակով կար մի աղքատ ռամիկ
խեցիւտին սնունով։ Սորան պատահեցաւ
մի անգամ տանել խուրձ անտառափայտի
հոչակաւոր կախարդի մօտ, որ սեղանի ա-
ռաջ բազմած՝ ուտում էր հոյակապ ճաշ և
խմում էր ամենապատուական գինի։ Այս
տեսարանը շատ գրաւեց մեր ռամիկին,
որ աչքերը ցցած սեղանի վերայ՝ սկսաւ

աղաջել և ասել . «Զէ կարելի արդեօք , որ
սովորացնես ինձ ևս այդպէս երևելի կա-
խարդ լինել» :

— Անտարակոյս , կարելի է , պատասխա-
նեց կախարդապետը ուամկին , գեղեցիկ և
երևելի կախարդ լինելու համար հարկաւոր
է միայն ծախել եղերը , սայլակը , գնել
այբբենարան , Գերմանական հանդերձ , աչա-
այսպիսի գործիներ որ տեսնում ես սեղանիս
վերայ և սենեակիդ դրան վերայ գրել .

«Այս տեղ կենում է երևելի կախարդ» :

Առ ուամիկը խիստ հասարակ և պար-
զամիտ մարդ էր . կախարդապետի խօսքերը
ՀՀալած իւղի տեղ ընդունեց , և բոլոր պա-
տուէրքը կատարեց : Դեռ ևս չէր կարողա-
ցել աչքը բանալ և տեղաւորուել , մին-էլ
տեսնես դրացի կալուածատէրից գողացան
մեծ գումարի վող : Կալուածատէրը երկար
չըմտածեց , հրամայեց լծել ձիերը և գնաց
ուղիղ դէպի քաղաք : Յանկարծ փողոցում
մի դրան վրայ տեսաւ վերնագիր . «Այս
տեղ կենում է երևելի կախարդ» : Զափա-
զանց ուրախանալով այս դիպուածից՝ հը-
րամայեց կանգնեցնել ձիերը և բաղխել
դուռը : Դուրս է գալիս ուամիկը , իսկ կա-
լուածատէրը հարցուցանում է :

—» Այստեղ է կենում կախարդը: Տառ
—» Այդ կախարդը ես ինքս եմ, պատաս-
խանեց ուսմիկը:

—» Ուրեմն գնանք միասին: Դու երևելի
կախարդես, կընշանակէ պարտական ես ին-
ձանից գողացած փողերը գտնել:

— Լսում եմ, պատասխանեց միւսը,
միայն ես կարող չեմ գնալ առանց կնոջս
Մարիամին:

Կալուածատէրը չէ! չասաց և տարաւ իւր
հետ երկուսին-էլ:

Երբ որ մտան նոքա Ճոխ պալատը, սե-
ղանը արդէն ծածկած էր սփոռով և կա-
լուածատէրը ասաց մեր կախարդին:

— Արկամենաս մեղ հետ ճաշել:

— «Խչո՞ւ չէ, պատասխանեց ուսմիկը,—
միայն թող Մարիամս-էլ նստի ինձ հետ:

Եւ ահա! նոքա երկուքն-էլ նստած են
տան տիրոջ սեղանի առաջ:

Վտնում է սպասաւորը առաջին սկու-
տեղով, իսկ ուսմիկը զարկում է իւր կը-
նոջ կողքին ասելով.

— Լսիր, կին, սա բոլորի սկիզբն է:
Դորանով նա կամեցաւ ասել ճաշի ըս-
կիղըը. բայց սպասաւորը այլապէս հաս-
կացաւ և կարծեց որ կախարդը ուզում էր

ասել թէ՝ նա գողերի առաջինն է։ Սպա-
սաւորի սիրութը վախից դող ընկաւ և, վե-
րադառնալով դէպ իւր ընկերակիցքը,
ասում է. — Եղբարք, մեր բանը բուրդ է,
կախարդին ամենայն ինչ յայտնի է. նա
ասաց որ ես ամեն բանի սկիզբն եմ։

Երկրորդ սպասաւորն-էլ վախեցաւ դահ-
լիճ մտնել, երբ որ իւր կարգը եկաւ։ Դեռ
ոտը շէմի վրան դրած չէր, ուսմիկը զարկեց
կնոջ կողքին ասելով. — Ահա, այդ երկ-
րորդն է։

Երրորդ սպասաւորը լսում է նոյն ակնար-
կութիւնը, և մեր գողերը չըգիտէին ո՞ւր
փախչել վախից։ Սակայն մօտենում է չոր-
րորդ սպասաւորը, բերելով կափարիչով
ծածկած սկուտեղ. սկուտեղի մէջ դրած
էր խեցղետին։

Տանուտէրը ասում է կախարդին. — «Ահա
քեզ դիպուած ցոյց տալու քո գիտու-
թիւնը. իմացի՛ր, տեսնենք, ի՞նչ գտնուում
է այս սկուտեղի մէջ»։

Ուսմիկը տիսրութեամբ նայեցաւ սկու-
տեղի վրայ, հնար չըգտնելով փորձանքից
ազատուելու։

— Ո՞հ, բացադանչեց նա խորին հառա-
չանքով, խեղճ, խեղճ, խեցգետին։ *

Նորա անունը նոյնպէս խեցգետին էր։
Այն ինչ կալուածատէրը լսեց այս, ապ-
շած մնաց տեղումը։

— Ի՞չ, այժմ կասկածել հարկաւոր չէ,
ասաց նա. — կընշանակէ դու կ'իմանաս,
ով գողացել է ինձանից փողերը։

Այս բանիս վրայ սպասաւորը սաստիկ
այլայլած, նշանացի է անում մեր ռամիկին
հետեւել նորան մի ուրիշ սենեակ։ Ռամիկը
գնաց նորա քամակից և չորս սպասաւորքն
էլ խոստովանուեցան նորան, որ տան տի-
րոջ փողերի գողացողքը ինքեանք են, և
պատրաստ են վերադարձնել բոլոր գումարը
տիրոջ և կախարդին-էլ պարգևել շատ
փող, միայն խոստանայ չըմատնել նոցա։
Յետոյ գողերը տարին նորան այն տեղ, ուր
պահէլ էին գողացած փողերը։ Կախարդը,
բաւական իրանից և իր ճակատագրից, գը-
նաց դարձեալ սեղանատունը և ասում է
տան տիրոջ։

— Դիէ, պարոն, հիմի ժամանակ է խոր-
հուրդ անել իմ գրքի հետ։ Նա անպատ-
ճառ կ'ասէ ինձ, որ տեղ են քո փողերը։
Այս խօսքերը լսելով հինգերորդ սպասա-
ւորը, պահուեցաւ տան տիրոջ կրակարանի
մէջ, ինքներեն ասելով։ — «Տեսնեմ մի՝

ղորդ այս կախարդը շատ բան գիտէ, թէ
նա մարդ խաբում է»:

Ուամիկը սաստիկ զբաղած՝ իր այրբենա-
րանը կարդում է այս կողմ այն կողմ շրջե-
լով, և կարծես թէ մի բան, Աստուած
գիտէ ինչ, պնտրում է ու չի կարող գըտ-
նել և անհամբերութեամբ ասում է. —
Դիաց դու անպատճառ այս տեղ նստած պի-
տի լինիս, կամիս չըկամիս դուրս եկ այս
տեղից»:

Սլասաւորը, որ պահուած էր վառա-
րանի մէջ, լեղապատառ դուրս թռաւ այն
տեղից, աղաղակելով. — Այս կախարդը ա-
մեն բան գիտէ:

Վեր ուամիկը սյս բանից յետոյ ցոյց տը-
ւաւ կալուածատիրոջ փողերի տեղը, բայց
չասաց գողերի անունը, ուստի դորա համար
ստացաւ կրկին վարձատրութիւն կալուա-
ծատէրից և գողերից. սյն օրից սկսած
հարստացաւ ու մինչև մահ երջանիկ կեանք
վայելեց:

մըս զջոցների պատճ ողի շնորհման լինու-
ածոցն ովել պու 3 առաքածություն միջառդ
առաջ մասի պատճ ու առաջ մասի պատճութ
Փոքրինէ.

Երբ փորձանքը գայ, այնուհետև հնար
չըկայ նորանից աղատուելու, ուղես պատէ-
պատ ընկիր և գլուխդ քարին տուր:

Կար մի աղքատ մարդ, այնպէս աղքատ,
որ չունէր անգամ հնոցը վառելու փայտ,
սակայն ցուրտը անտանելի էր: Նա դնաց
անտառ ծառ կտրելու համար, բայց ասես
թէ գիտութեամբ բոլոր ծառերը բանի
պէտք չէին գալիս, մէկ քանիսը խիստ մեծ
էին, միւսները խիստ փոքր:

Կամաց կամաց առաջ դնալով գտաւ վեր-
ջապէս մի դալար ծառ, մրանգամայն յար-
մար և պիտանի իւր գիտաւորութեան:
Գեռ խեղճը չէր բարձրացրել կացինը, մին
էլ տեսնես խիտ անտառից դուրս վաղեցին
բաղմաթիւ գայլեր և ուղիղ յարձակուեցան
նորա վերայ այնպիսի սարսափելի աղա-
զակով, որ վախից ողորմելին ձգեց ձեռից
կացինը և փախաւ առանց յետեր նայելու:
Վաղեց վաղեց և վերջապէս հասաւ կամուր-
ջի մօտ, բայց չար բախտից այնպէս պա-
տահեցաւ, որ այդ ժամանակ ջուրը սաս-

տիկ մեծացել էր, ուստի կամուրջը նոյն
ըսպէին խորտակուեցու, երբ մեր թշուա-
ռականը կամենում էր ոտքը վրան դնելու
միւս ափը անցնել։ Ի՞նչ անել այս տեղ,
մնալ չէր կարելի, կատաղած գայլերը կը
գային և անշուշտ պատառ պատառ կ'անէ-
ին. և ահա փորձանքով ստիպուած թշուա-
ռականը նետուեցաւ ջուրը, բայց սյս տեղ
էլ սպասում էր նրան մի այլ փորձանք.
Ըղանալ նա տակաւին ըրդիտէր, և ուստի
խկոյն բանալու պէս տակը գնաց։ Այդ
ժամանակ ավումը նստած էին երկու ձըկ-
նորս։ Տեսնելով խեղճի չար վիճակը, նոքա
խկոյն ընկան ջուրը և բարեյաջողութեամբ
հանեցին, դրին նորա հին շրջապատի տակ
արեգակի առաջ, որ տաքանայ և յուշա-
բերուի։ Ե՛րբ նա սժափեցաւ և ուզեց շր-
նորհակալ լինել ձըկնորսներից ու պատ-
մել նոցա իւր արկածքը, յանկարծ հին շր-
ջապատը փուլ եկաւ և Ճնշեց նորա իւր
տակ։

ՄԵԴ ՀԱՅՐ և ԹԱԿԱՆ.

Կար մի ծեր աղքատ՝ կոյր աչքերով,
պիսդ ականջներով և դողդոջուն ծունկե-
կերով։ Երբ որ նա նստում էր սեղանի ա-
ռաջ, հազիւ թէ կարողանում էր բռնել
գրգալը. միշտ թափում էր ծածկոյթի վրայ
մսաջուրը և երբեմն ևս բերանից վազցը-
նում էր։

Նորահարսը և ինքը որդին մեծ տհա-
ճութիւն զգացին դէսլ ի նա այդ բանի
համար, և վերջապէս նշանակեցին նորա մի
առանձին անկիւն կրակարանի յետեր, դը-
նելով դիմացը փոքրիկ կիսաբեկ սկուտե-
զով կերակուր։ Ծերունին միշտ արտասուա-
լից աչքերով նսյում էր տխրութեամբ
սեղանի կողմը։ Մի օր սկուտեղը, որ նա
դժուարութեամբ բռնում էր իւր դողդո-
ջուն ձեռքով, ընկաւ գետինը ու ջարդ ու
փշուր եղաւ։ Երիտասարդ հարսը սաստիկ
բարկացաւ և սկսաւ մեղադրել նորան։
Խեղճը գլուխը խոնարհած, ըրհամարձա-
կեցաւ անգամ պատասխան տալ։ Նորա
համար գնեցին երկու դաշեկանի մի փայ-

տեայ սկուտեղ, որի մէջ այնուհետև սովորութիւն արին տալ կերակուրը:

Աչկ քանի օր անցած, նորա թոռը որ չորս տարեկան տղայ էր, հաւաքում էր գետնից փոքրիկ փայտի կտորներ: Ծերունու որդին և հարսը տեսնելով տղայի ըզբաղմունքը, հարցրեցին՝ Ի՞նչ ես անում այդ տեղ, սիրելի:

— Սա խողովակ է, պատասխանեց մանուկը, հօրս և մօրս կերակուր տալու համար, երբ նոքա ևս կըծերանան:

Վարդ ու կնիկը լուռ ու մունջ նայելով մէկ մէկու վերայ, սկսեցին լալ. դարձեալ ընդունեցին իւրեանց մեծ հայրը սեղան, և այնուհետև հրամայեցին միշտ սեղան նստել առանց քիթ պոռնկ ցոյց տալու:

5

Եռայնականութեան.

Երբ որ Առամազդ ստեղծեց աշխարհ, կամեցաւ նշանակել ժամանակ երկայնակեցութեան, իւրաքանչիւր արարածի ցանկութեան համեմատ: Եկաւ էշը և ասում է.

— Արամաղդ, քանի տարի կեանք ես
նշանակում ինձ:

— «Երեսուն, բաւականէ քեզ համար:
— Ո՞չ, մեծ արարիչ աշխարհի, ի՞նչ
ոլէս կարելի է այդ, խիստ շատ է: Մտա-
ծի՛ր մի, ինչպէս դժուար և անտանելի է
իմ կեանքը. առաւօտից մինչև գիշեր կը-
րի՛ր ուսերիդ վերայ ծանր բեռներ, տար
ջաղացք սկարկերով ալիւր, որ ուրիշների
համար հաց եփեն, իսկ քեզ դրա վարձա-
տրութիւն քացիներ տան: Ո՛չ, խնդրեմ,
ի սէր Աստուծոյ կարձացրու այդ տրտմու-
թեան և չարչարանքի ծանր ժամանակը:

Աղորմած Արամաղդը մեղքացաւ էշին և
որոշեց նրան տասնըութ տարի կեանք: Էշը
մխիթարուած դուրս ելաւ և նրա տեղ
մտաւ շունը:

— Քանի տարի ուղումես ապրել, հար-
ցրեց նորանից Արամաղդը. ահա էշը ասում
է, թէ երեսուն տարի նրան համար չափա-
ղանց շատ է, բայց դու, երեսի համաձայն
չես նրա կարծիքին և կըկամենաս աւելի
ապրել:

— «Ա՞նթէ քո կամքը այդպէս է, արա-
րիչ: Գէ՛, ինքո քննիր, ո՞րքան իմ կեան-
քումս պէտք է վաղվզել. կարո՞ղ են ար-

դեօք այս շան կեանքում երկարի դիմանալ
իմ խեղջ թաթերս. իսկ երբ ձայնս կտրվի
որ հաշեմ, ոյժս-էլ գնայ որ խածնեմ, ի՞նչ
կ'անեմ այն ժամանակ. մի անկիւնից միւսը
քարշաքարշ գնալով մռմռալ. ո՛չ, ո՛չ:

Ամենողորմած Արամազդը ընդունեց նորա
Ճշմարտութիւնը և որոշեց տասներկու տարի
կեանք: Կարդը եկաւ կապիկին:

— »Դու խօ ուրախութեամբ յանձնկ'առ-
նուս երեսուն տարի ասլրել, Հարցրեց Արա-
մազդը, ինչու որ դու դատապարտուած չես
աշխատութեան. էշի և շան սկս քո բանը
գործը զուարճանալ է և մին-էլ ատամներդ
ցոյց տալ:

— Տե՛ս խնդրեմ, քեզ միայն այդսկսէս է
երեսում, բայց իսկասկէս բոլորովին այդսկսէս
չէ: Ես պարտաւորուած եմ անդադար և ան-
խոնջ կոտրատուել ու դժուարին խեղկա-
տակութիւններ անել՝ մարդիկ ծիծաղեցնե-
լու համար: Սակաւ կըպատահի, որ նոքա ինձ
խնձոր ձգեն, այն ևս կըխածնես — միշտ
դառն է լինում: Ծիծաղիս տակ միշտ ծած-
կըվում են առատ և դառն արտասունք-
ներ: Ո՛չ, ո՛չ, չեմ կարող երեսուն տարի
ապրել: Արամազդ խղճացաւ նրա վրայ-էլ և
տուեց միայն տասն տարի ապրելու:

Աչա, վերջապէս գալիս է ուրախ, ժիր
և առողջ մարդը, և խնդրում է Արամազ-
դից իր կեանքի սահմանը:

— «Չատ բարի, քեզ տալիս եմ երեսուն
տարի, ասաց Արամազդը, բաւական է թէռչ:

— Ո՞չ, ի՞նչպէս կարելի է այդքան փոքր,
բայցագանչեց մարդը, ես չեմ կարող այդ
կարծ միջոցում տեղաւորուելու և սեպչա-
կան տուն ունենալ: Թող այդ, մի՞թէ, կա-
րող են այդ կարծ միջոցին տնկած ծառերս
ծաղկել ու պտուղ տալ: Ի՞նչպէս մեռանիլ
դեռ չիմացած կեանքի երջանկութիւնը:

Ո՞վ տէր երկնքի ու երկրի, աւելացրո՞ւ
ինձ մի փոքր ես:

— «Ե աւ, կ'աւելացնեմ քեզ էշի տասնը-
ութ տարին, ասաց ողորմած Արամազդը:

— Այդ էլ դեռ փոքր է:

— » Թաէ այդսկէս է, ահա տալիս եմ քեզ
էլ տասներկու տարի շան կեանքից:

— Այդ էլ շատ փոքր է:

— «Բարի, ահա՝ քեզ այլ ես տասը տարի
կատիկի կեանքից, տես աւել մի՛ ուզիր:

Արդը գնաց, բայց դարձեալ անբաւական
իւր վիճակից: Եւ ապա այն օրից մարդս
ընակվում է մինչև եօթանասուն տարի:
Առաջին երեք տասնեակը բնական տարի-

ներ են, բայց շատ շուտ են անցանում : Այդ հասակում մարդս ժիր, առողջ ու զուարթ է լինում, ուրախութեամբ աշխատում է և գիտէ վայելել կեանքը : Գալիս են էշի տարիները . այդ միջոցում մարդս անցանում է մի հոգսից դէպ ի միւսը, ուրիշներին կերակրելու համար կրում է հացեղէն, իսկաշխատութեանը վարձատրութիւն ստանում է զարկ և քացի : Ահա՝ շանկեանքը էլ եկան . նստում է մարդը տան անկիւնում և քրթմնջում է քթի տակից, խածնել ոչ ոքին չէ կարող, ատամներ չունի : Անցնում է այն ժամանակն էլ և վերջանում է կեանքը կապիկի տարիներով . այդ միջոցին մարդս խսպառ տկարանում է, գլուխը ըսկում է երերած, կրկնում է նա միշտ մի և նոյն բաները և ամենայն ինչ բնազդութիւնով ու սովորութիւնով է անում, բայց աւաղ, շատ անգամ նորա անմեղ ձեռնարկութիւնները ծիծաղելու առարկայ են լինում ջահիլներին :

ոզ գմնԱ մաղոմ ցառա ոյ տօնն վմողայս
Համար միա շնչառակա հրաշ արյուն ուն
մաս ։
ՎԵՐ ՀՐԴԻ ՀՅՈՒԹԱՆՔՆԱ ԱՌԵՆ ԷԿԱՆԵ.

ԱԿ ամեն արհեստի ընդունակ մարդ
մտաւ զինուորական պաշտօն արքայորդու
մօտ և ծառայեց նորան մեծ քաջութեամբ։
Երբ որ սլատերազմը վերջացաւ վարձատրու-
թիւն ըստուած հրամայեց նորան վերադառ
նալ իւր հայրենիքը։ Այս տեսակ խարե-
բայութիւնը շատ անհաճոյ թուեցաւ զինուո-
րականին, ուստի մտադիր եղաւ, եթէ ընկեր-
ներ գտնի, ստիպել թագաւորին տալու բոլոր
գանձը իրեն այդ անիրաւութեան համար։

Չարացած մտաւ անտառ և տեսաւ այն
տեղ մի մարդ, որ մի ձեռով արմատախիլ
էր անում վեց ծառ, կտրծես թէ այդ ծա-
ռերը հասարակ կանաչներ լինէին. դառնա-
լով դէպ ի այդ ուժեղը հարցրեց. „Կամիս
հետեւել ինձ և լինել ծառաս“։

— **Ա**նձ ուրախութեամբ, սլատասխանեց
ուժեղը. — Միայն այս խուրձս հարկաւոր է
առաջ տանել տալ մօրս։

Եւ առնելով ծառերից մինը, կապեց նո-
րանով միւսները, ձգեց խուրձը ուսերի վե-
րայ և տարաւ տուն։ Յետոյ դարձաւ իւր

պարոնի մօտ, որ ասաց նորան. „Մենք քո
հետ երկու հոգի կը հասնենք ամեն բանի“:

Փոքր ինչ հեռու նոքա պատահեցան
որսորդի, որ ծնկաչոք ուղղում էր իւր հը-
րացանը: Զինւորը հարցրեց „Որսո՞րդ, դէալ
ի որին ես ուղղում հրացանդ“:

‘Եա սլատասխանեց. — Երկու մղոն հե-
ռու այս տեղից կաղնու ոստի վերայ նըս-
տած է ձանձ. ես կամենումեմ զարնել նո-
րա ձախ աչքին:

— Ո՞, ո՞, երթանք ինձ հետ, մենք երեք
հոգի կը հասնենք ամեն բանի:

Որսորդը հետևեց նոցա և հասան նոքա
եօթը ջաղացքին, որոնք արագ արագ սլը-
տոյտվում էին իւրեանց թևերով, թէն
տակաւին հողմ չըկար ոչ աջակողմից և ո՛չ
ձախակողմից, այնպէս, որ տերևները ան-
դամ չէին խշխշում: Զինւորականը ասաց.
„Զեմ կտրող հասկանալ ի՞նչպէս պտոյտվում
է այս ջաղացքը. օդը միանդամայն անշարժ է“.

Երկու մղոն անցած նոքա տեսան ծառի
վերայ մի մարդ, որ մի ոռւնդը փակած
փշում էր:

— „Ի՞նչ ես փշում այդ տեղ, հարցրեց
զինւորը:

— Երկու մղոն հեռու այս տեղից, պա-

տառիսանեց նա, ինչպէս տեսնում էք իմ
սիրելիք, կան եօթն հողմաղացք, ես փը-
չում եմ, որ նոքա պտոյտ դան:

— „Ո՞՛, երթանք միասին, — ասաց զին-
ւորը, — մենք չորս հոգի կըհասնենք ամեն
բանի:

‘Եա իջաւ ծառից և գնաց ընկերութեան
հետ:

Այի քանի ժամանակից յետոյ, նոքա պա-
տահեցան միուսանի մարդու. միւս ոտը նա
հանել էր և դրել իւր մօտ:

— „Ե՞յ զարմանալի մարդ, — ասաց զին-
ւորը, — երեխ կամենում է հանգստանալ:

— Ես արագոտն եմ, պատասխանեց
միուսանին, — շատ արագ չըգնալու հա-
մար մի ոտս հանեցի, ըստ որում երկու
ոտով սյնալէս շուտ եմ վաղում, որ ծիծեռ-
նակը անդամ չի կարող ետևիցս համնել:

— „Ո՞՛, ե՛կ ինձ հետ, մենք հինգ հոգի
կըհասնենք ամեն բանի:

Երագոտը գնաց նոցա հետ և շուտով
նոքա պատահեցան մի մարդու, որի գլուխը
և ականջները ծածկած էին փոքրիկ գըւ-
խարկով:

Զընայելով որ ես զգումեմ մեծ յար-
գանք դէպի ի ձեր անձը, համարձակվում

եմ խորհուրդ տալ, որ ուղիղ հագնէք գլխարկը, և ասլա թէ ոչ ձեր գլուխը կարծես թէ բոժոժաւոր լինի:

— Երբէք, երբէք, պատասխանեց նա. Երբ ես ուղիղ եմ հագնում գլխարկս, այնուէս ցուրտ է անում, որ թոշունները սառում են օդի մէջ և անկենդան ընկնում են գետնի վերսոյ:

— Ո՞, ուրեմն երթանք միասին, ասաց զինւորը. Անք վեց հոգի կըհասնենք ամեն բանի:

Եւ եկան նոքա վեց հոգի քաղաք, ուր արքայորդին հրատարակել էր թէ՝ ով յանձն առու լինի վիճել նորա աղջկայ հետ արշաւանքի մէջ, կըստանայ նորա ձեռքը, եթէ յաղթի, և կըզրկուի գլխից եթէ յաղթուի: Զինւորը ներկայացաւ արքայորդուն և խընդրեց հրաման իւր տեղը ծառաներից մէկին ուղարկել: «Շատ բարի, պատասխանեց արքայորդին, բայց եթէ նա չըյաղթի, այն ժամանակ և նորա և քո գլուխը կըկտրին»:

Եյսպիսի պայման դնելով, զինւորը հրամայեց իւր արագոտին կապել միւս ոտքը, վաղել անյապաղ և գործ դնել ամենայն միջոց, որ յաղթող հանդիսանայ: Պայմանագրած էր, որ նա կըլինի յաղթող.

ով առաջինը կըքերի աղքիւրից ջուր, ու օր
հոսում էր քաղաքից շատ հեռու։ Ես ճան
Արագոտը և արքայադուստրը ստացան մի
մի բաժակ և միևնոյն ժամանակ լնկան Ճա-
նապարհ։ այն ինչ արքայադուստրը միքանի
քայլ էր արել, արագոտը արդէն անչե-
տացաւ աչքից, հասաւ աղքիւր, առաւ ջուր
և դարձաւ յետ։ Բայց Ճանապարհին յոդ-
նութիւն զգալով, դրաւ բաժակը գետնի
վերայ և սկառկեցաւ ձիու գանգի վերայ,
որ Ճանապարհին գտել էր, որսէս զի բար-
ձի կոշտութիւնը չըթողնէ նորան երկար
քնել։

Մինչ այս մինչ այն, արքայորդու դուստրը,
որ վազում էր սյնքան լաւ, որքան կարելի
էր հասարակ մարդու, հասաւ աղքիւր,
լցրաւ բաժակը և շտապով յետ դարձաւ։
Նա սկառկեցաւ արագոտին ննջած։ „Լաւ,
ասաց ինքնիրեն ուրախացած, թշնամին
այժմ իմ ձեռումն է։ Թափեց նորա բաժա-
կի ջուրը և շարունակեց իւր Ճանապարհը։
Ամենայն ինչ կորած էր, եթէ, բարերադ-
դաբար, որսորդը, որ կանգնած էր ամրոցի
տանիքի վերայ, չըտեսներ այս իրողութիւն-
քը իւր հեռատես աչքերով։ Հըմ, լաւ
է, եթէ արքայադուստրը յաղթի նորան,

ամուսնեց նա, և իւր Հրաշանի մի հարուսա-
ծով թուղթեց նորադլսիտակի բարձը, ոյս-
գինքն ձիսն գանգը, առանց մի վնաս սկա-
ռասելով սկառկողին։ Արագոտը, զարթելով
Հրաշանի ձայնից, տեսաւ դատարկ բաժակը և
Հասկացաւ խաղի էութիւնը։ Ինչեւիցէ, սկ-
ահելով հոգու ներկայութիւնը, նորից դնաց-
աղբիւր, նորից լցրաւ բաժակը, և դարձաւ
սկառ տասը վայրկեան առաջ արքայա-
դստրից։ „Ահա, ոտքերս վերջասկէս ջարդ-
ու փշուր եղան, ասաց նա, ինչ որ մինչեւ
սյժմ արել էի՝ չի կոչվում վաղել։“

Երբային և նորա դստեր շատ անհաճոյ
թուեցաւ հասարակ և չքաւոր զինւորի
յաղթութիւնը. ուստի վճռեցին սպանել
նորան բոլոր ընկերների հետ միասին։ Ար-
քան ասաց իւր դստեր. „Ես գտայ հնար,
մի՛ վախիր, չեն աղատուիլ մեր ձեռքից,“
Յետոյ, մեծարսնքի սկառուակով, տարաւ-
նոցա մի սենեակ, որի յատակը, դոները և
լուսամուտքը երկաթից էին շինած։

Սենեակի մէջ տեղ դրած էր սեղան գե-
ղիցիկ ձաշով։ „Մտէ՛ք, ասաց արքան, և
լաւ սկառիւ տուէ՛ք ձաշին։“ Եւ երբ մտան
նոքա, Հրամայեց բոլոր դոները փակել
գրսից սկառունակներով։ Յետոյ կանչեց իւր

Խոհաբարը և հրամայեց կրակ վառել այդ
սենեակի տակ և պահել այդ կրակը մինչև
որ յատակը իսսլառ կարմրի։ Նորա հրա-
մանը կատարուեցաւ. շուտով վեց ընկերք
զգացին տաքութիւն. առաջ կարծեցին որ
այդ տաքութիւնը յառաջանում է մեծ ախոր-
ժակից, որով ուսում էին համեղ կերա-
կուրը. բայց ջերմութիւնը անդադար սաստ-
կանում էր, այնպէս, որ նոքա վերկացան և
կամեցան դուրս գնալ. միայն, տարաբաղ-
դաբար, տեսան այժմ որ դոները և լուսա-
մուտքը փակած էին, և պարզ հասկացան
արքայի դիուանորութիւնը։ „Սակայն նա
յաջողութիւն չի ունենալ, ասայ փոքրիկ
գլխարկով մարդը. որովհետեւ այնպիսի
ցուրտ կըքերեմ, որ կրակը ամենեին չի կա-
րող դիմանալ“։ Եւ դնելով գլխարկը ուղիղ
գլխի վերսոյ, այնպէս ցուրտ բարձրացաւ,
որ նոյն րոպէին ջերմութիւնը անցաւ և
ամանները սառեցան սեղանի վերայ։

Երկու ժամից յետոյ, արքայն համարե-
լով նոցա խորոված, հրամայեց բանալ դու-
ռը և եկաւ ինքը տեսնել նոցա դրութիւ-
նը։ Բայց այրուելու դատապարտուածները,
վեց հոգի ժիր և կենդանի նոբա դիմաց
վազեցին, յայտնելով որ մեծ ուրախու-

թեամբ պատրաստ են դուրս ելանել վոքք
ինչ տաքանալու համար, ըստ որում սեն-
եակի մէջ սյնպէս ցուրտ է, որ կերակուրը
սառել էր սեղանի վերսյ: Արքան, այլայլած
բարկութիւնից, դարձաւ դէսլ ի խոհարարը
և հարցրեց թէ՝ ի՞նչու համար չէր կատա-
րել նորա հրամանը: Բայց խոհարարը պա-
տասխանեց:

— Այս տաքացրի միշև կարմրելը, ինք-
ներդ նայեցէք:

Արքան համոզուեցաւ, որ յատակի տակ
ձշմարիտ վառած էր դժոխական հուր. սակայն
այն վեց քաջերը մսաս չէին կրել դորանից:
Արքան միջոց որոնելով անհանգիստ
հեւըերից աղատուելու, կանչեց զինւորը և
ասաց. „Եթէ հրաժարուես իմ աղջկայ ձեռ-
քից, կըտամ քեզ այնքան ոսկի, որքան որ
կամենաս:

— Ուրախութեամբ, ձերդ մեծութիւն,
պատասխանեց զինւորը, տուէք ինձ սյն-
քան ոսկի, որքան կարող է տանել ծառա-
ներիցս մինը, և ես կըհրաժարուեմ իմ
իրաւունքից:

Արքոյի ուրախութիւնը անասելի էր,
զինւորը ասաց նորան, որ երկու շաբաթից
յետոյ կըգայ ոսկին առնելու:

Եյդ միջոցին նա կանչեց տէրութեան
բոլոր դերձակները և վարձեց նոցա երկու
շոբաթով մի մեծ սկարկ կարելու: Երբ սկարկ
կը սկառբաստուեցաւ, այն ուժեղը, որ մի
ձեռքով արմատախիլ էր անում ահազին
ծառեր, ձգեց ուսի վերայ և գնաց արքայի
տունը: Արքան հարցրեց շրջապատողներից
թէ՝ «Վ է այդ քաջը, որ տան մեծութեամբ
կատոցը ուսի վրայ դրած տանում է, և
երբ որ իմացաւ՝ շատ վտխեցաւ երեակա-
յելով այն ահազին գումարը ոսկու, որ կա-
րող էր մտնել այդ սկարկի մէջ: Կա հրա-
մացեց դլորել մի մեծ տակառ ոսկի, որ
տասնըվեց մարդ հաղիւ հաղ կարողանում
էին շարժել տեղից. բայց մեր Հերակլէու
բոնեց մի ձեռքով, ձգեց սկարկի մէջ, և
սկսաւ դանդատել թէ՝ բերածները այնտիսի
ջնջին բան է, որ սկարկի տակը անդամ չը
ծածկեց: Արքան հրամացեց բերել իւր բո-
լոր դանձը, բայց դեռ կէսը չըլցրաւ:

— «Ճերէք այլ ևս, աղաղակում էր զին-
ւորը, երկու կտոր փշրանքով մարդ չիս
կշտացնիլ»: Ճերին էլ եօթը հարիւր սայլ
ոսկի տէրութեան բոլոր սահմաններից, և
այդ բոլորը լծած եղերի հետ միասին ձգեց
նա սկարկի մէջ: „Դէ, այժմ ինչ որ սկ-

տահեր, կը ձգեմ մէջը, որ շուտով լցուի,
ասաց ուժեղը[“]: Զգեց նա ինչ որ պատահե-
ցաւ ձեռքի տակ, բայց սյնու ամենայնիւ
պարկի մէջ դեռ շատ դատարկ տեղ մնաց:
”Հարկուոր է վերջացնել, կարելի է թե-
րալից սլարկը և կապել[“], ասաց նա, և
կապելով սլարկի րերանը, դրաւ ուսի վե-
րայ և զնաց ընկերների մօտ. Արքան տես-
նելով որ մի մարդ տանում է տէրութեան
բոլոր դանձը, սաստիկ զայրացաւ և հրա-
մացեց իւր հեծելազօր գնդին ձիու վերայ
նստել, վաղել նոցա քամակից և յափշ-
տակել սլարկը: Շուտով հասան զօրքերը
նոցա յետենից աղաղակելով. ”Թոք կալա-
նաւորք էք, տուէք ոսկով սլարկը, ասկա
թէ ոչ այս բոսէիս կտոր կտոր կ'անենք
ձեզ[“]:

— «Ի՞նչ էք երդում այդ տեղ, հար-
ցրեց վշողը. մենք կալանաւորք ենք: Ոչ,
իմ սիրելիք, մի առաջ կաքաւեցէք օդումը:
Եւ վակելով մի ոռւնգը, միւսով սկսաւ
այնսկէս վչել երկու զօրագնդի վերայ, որ
բոլորերեան բարձրացան երկինք սարերի և
ձորերի վրայից: Մի ծեր գնդասկետ սկսաւ
թողութիւն խնդրել, որ ինը խոց ունի, և
թէ այդսկախի քաջ մարդու հետ չէ արժան

այդսկէս անտմօթաբար վարուել։ Փշողը դա-
դարուեցաւ փոքր ինչ և գնդապետը անվնաս
ընկաւ գետնի վրայ։

— „Գնա արքայի տունը, ասաց մեր
քաջը, և յայտնիր նորան, որ որքան կամի
մարդ ուղարկէ, բոլորին երկինք կըթու-
նեմ։”

Երքան իմանալով այս դիսլուածը, ա-
սաց. „Թող գնան կորչեն այդ կախարդնե-
րը, նոցա հետ չի կարելի գործ ունենալ։
Վեց հոգի բոլոր գանձը տուն տարան,
բաժանեցին իւրեանց մէջ և մինչեւ մահ եր-
գելով անցուցին։”

7

Նախապատճեն և Ունի։

Այս սկատմութիւնը, տղայք, կարելի է
սուտ կըթուի ձեզ, թէև Ճշմարիտ է. ըստ
որում, մեծ հայրս, որից լսել եմ ես,
պատմելու ժամանակ միշտ աւելացնում էր.
„Տարակոյս ըլկայ Ճշմարիտ է այս, ապա թէ
ոչ մի մարդ յանձն չէր առնէր սկատմելուն։”
Ահա ինչպէս պատահեցաւ այս բանը։

Այս ամարացին առաւօտ հնձոյ ժամանակ,

Երբ բրինձը ծաղկած էր, արեղակը վայլում
էր երկնակամարի վերայ, թեմւ ու քաղցր
հողմը շարժում էր ցորենի հասկերը, ար-
դառտները երգում էին, մեղուները բղղում
էին, մարդիկ հանդիսական շորերով դնում
էին եկեղեցի և համօրէն երկրային արարած
ուրախութեան մէջ էր, Ոզնին ևս դուրս
էր ելած հաղորդակից լինելու ընդհանուր
ուրախութեան:

Ի՞սկ նա կանգնած դրան առաջև՝ թա-
թերը ծալած նայում էր իւր չորս կողմը և
երգում էր մի երգ, որ այլ ոզնիների, սովո-
րաբար կիւրակէ առաւօտեանները երգած-
ներից վատ չէր: Նորա կիսաձայն երգելու
ժամանակ ծնաւ գլխումը բաւականին հա-
մարձակ միտք (կինը այդ միջոցին լուսոցք
էր անում և հագուեցնում էր երեխայքը),
մի քայլ անել մարդագետնի վերայ և տե-
սանել թէ լաւ է արդեօք բուսանում շղ-
գամը:

Ծողդամը բուսանում էր ովնու բնակա-
րանի շրջակայքում, ուստի նա նայում էր
նորա վերայ, իրեւ իւր սեպհականութեան
և սովորաբար կերակուրի տեղ էր դործ
ածում: Ասածը կատարած է: Ոզնին փա-
կեց դուռը իւր քամակից և գնաց:

— Ապիկ Կարողացել էր մի քանի քայլ
անել և մօտենալ փոքրիկ թուփին, որ բու-
սանում էր շողդամի չորս կողմով, մինչեւ
տեսնեալ սլատահեցաւ Նասլաստակին, — որ
գուրս էր ելեւ տանից նոյնսլիսի դիտաւո-
րութեամբ՝ տեսնել ի՞նչու է բուսանում
կաղամբը: Երբ ողնին տեսաւ նասլաստակին,
բարեկամաբար ողջոյն տուաւ բարի առա-
ւոտ ցանկալով նորան:

Դայց Նասլաստակը, որ իւր կարծիքով
երենելի ոմն էր և բաց ի դորանից ի բնէ
հսկարտ, ողջունին ողջոյն ըստուաւ, այլ
ծաղրածութեամբ ասաց նորան. «Այդ ի՞նչ-
ու սլատահեցաւ, որ դու վազվզում ես
դաշտերում այսսլիսի գեղեցիկ առաւօտ:

— Գնում եմ ձեմելու, սլատասխանեց
ողնին:

— «Շեմելու», — կրկնեց Նասլաստակը
բարձրաձայն ծիծաղելով, «կարծեմ դորա-
հսկամար ուրիշ ոտեր են հարկաւոր քեզ»:

Այս սլատասխանը խիստ անհաճոյ թու-
եցաւ Ողնուն: Նա երբէք չէր բարկանում,
եթէ ոտերի վերայ ըստիծաղէին, բայց երբ
բանը վերաբերվում էր նորա ոտերին, որոնք
ծննդից ծուռ էին, այն ժամանակ Աստուած
մի արասցէ, նա ի՞նչ արածը չէր իմանում:

— Դուք կարծեմ երեակայում ես, սիստանխանեց նա Նասլաստակին, որ քո ոտեղը ըլլիմից լսե՞ն: Այս մասը ով նաև առ զոյս ունեմ», սլատասխանեց Նասլաստակը:

— Սպասիր, դեռ այդ յայտնի չէ, նկատեց Ողնին: Ես սլատրաստ եմ քո հետ վիճել, որ կը յառաջիմ քեզ, եթէ միասին վաղենք:

— «Դու, քո ծուռ ոտերով, ծաղրես անում ի՞նչ է». ասաց Նասլաստակը: «Ստեղյան շատ բարի, ես սլատրաստ եմ վաղել, եթէ դու այդքան ցանկանում ես: Ուրեմն ի՞նչ լինի դրաւը»:

— Ա՞ն գրուան ոտկի և մի շիշ օղի, սլատասխան տուաւ Ողնին:

— «Համաձայն եմ, թող այդսկէս լինի», ասաց Նասլաստակը: «Մենք այս ըստէին կըսկսենք»:

— Ո՛չ, շտապելու բան չըկայ, սլատասխանեց ողնին: Եւ դեռ առաւօտուց մինչեւ այժմ ոչ ինչ չեմ կերել, առաջ դնամ տուն և մի բան ուտեմ, յետոյ կէս ժամից սլատրաստ եմ ուրախութեամք:

Առքա համաձայնում են և դնում են: Ճանասլարհին Ողնին ասում է ինքնիրեն,

ԴՅԱՍԼԱՍՏՈՎԱԿԸ յոյս ունի իւր երկայն ոտերի
վերայ, բայց ես նորա հետ մի խաղ կը խա-
ղամ. թէպէտ և շատ պարծենում է, բայց
խսկառէս, յիմարներից յիմարն է. ուստի
կը վճարէ և շատ կը դղջայ վերջը դորա հա-
մար։ Երբ Ողնին տուն եկաւ, ասաց իւր
կնոջ. „Կի՞ն, հագնուիր շուտ, գնանք դաշտ
ինձ հետ”, „Ի՞նչու համար, ի՞նչ կայ այն
տեղ”, հարցրեց կինը։

— Ահա ի՞նչ կայ. մենք Նասլաստակիի
հետ սկիտի վաղենք դաշտումը. ով մեղա-
նից առաջ ելանէ՝ նա ստանալու է յետ մնա-
ցողից մի գրուան ոսկի և մի շիշ օղի, ուստի
և դու սլարտական ես ինձ օդնել։

— Ո՞հ, դու Աստուած իմ. բացադան-
չեց Ողնուհին, խելքդ վերածդ է արդեօք,
թէ յնորվել ես։ Ինչպէս կարող ես դու
վիճել Նասլաստակիի հետ։

— „Ո՞ ոիր, կին”, պատասխանեց Ողնին,
այդ իմ գործն է։ Առադ շարժի՛ր, հագնուիր
շուտ և ի չու”։

Ի՞նչ էր մնում անել Ողնուհուն, կամիս
չըկամիս ոլէտք է հնազանդիս։

Երբ որ տնից ելան, Ողնին ասաց իւր
կնոջ, „Լաւ լոի՛ր ինչ ես քեզ կ'ասեմ”
Մեր վազելու տեղը այս մշակած դաշտն է.

Նապաստակը կըվազէ մի ակօսի մէջից, իթէ
մենք միւսի։ Քո սլարտականութիւնը ու-
րիշ բան չէ, բայց եթէ թաքչել ակօսի մէջ.
և երբ Նապաստակը վաղելով կըդայ քո մօտ,
յանկարծակի դուրս ելանել նորա առաջ
աղաղակելով՝ „Ահա ես“։

Եյս միջոցին նոցա ճանապարհորդու-
թիւնը վերջացաւ. Ողնին ցոյց տուաւ կնոջ
տեղը, ուր նա թաքչելու էր, իսկ ինքը
գնաց դաշտի միւս ծայրը։ Այնտեղ նա դը-
տաւ Նապաստակին, որ ասաց նորան. „Ի՞նչ
է, վաղելու ենք“։ — «Փ հարկէ», սլատաս-
խանեց Ողնին։

— Ուրեմն սկսենք։

Եւ իւրաքանչիւրը նոցանից կանգնեցաւ
իւր ակօսի մօտ։ Նապաստակը ասաց. „Մի,
երկու, երեք“, և կայծակի սլէս սլացաւ քա-
մակը չընսայած։ Ողնին հազիւ երեք քայլ
արել էր, կըսկաւ դետնին ու այնպէս մնաց։

Երբ նապաստակը մեծ մեծ ոստոսուելով
հասաւ դաշտի ծայրը, Ողնուհին դուրս ե-
լաւ նորա առաջ կանչելով. „Ահա! ես“.
Նապաստակը զարմացաւ։ Նա կարծում էր,
որ Ճշմարիտ իւր առաջ Ողնին էր կանգ-
նած, ըստ որում, կինը շպտ նման էր իւր
ամուսնոյն։

“Յասլաստակը մրժմրժայ, “Այս տեղ
անմաքուր զօրութիւն կայ“, և յետոյ աւել-
լացրեց բարձր ձայնով, „Մի անդամ ես“:

Եւ վաղեց նա մի անդամ ես վոթովիկի
նման, այնպէս, որ միայն նորա տկանջնորը
երեսում էին, իսկ Ողնուհին տեղեց շըշող-
ճեցաւ: Երբ Նասլաստակը հասաւ միւս
ծայրը, Ողնին դուրս ելաւ նորա առաջ և
կանչեց. “Ահա ես“. Նասլաստակը սյլոյլած
պատասխանեց. “Վաղենք նորից“:

— Կատ բարի, սկստասխանեց Ողնին,
ես սկստրաստ եմ հարիւր անդամ ես վա-
ղել, եթէ կամիս:

Կյասլէս Նասլաստակը եօթանասուն երեք
անդամ՝ վաղեց անդաղար դաշտի մի ծայրից
միւս ծայրը և Ողնին միշտ յաղթող մնաց:
Այն ինչ նասլաստակը հասանում էր դաշտի
ծայրը, Ողնին կամ Ողնուհին դուրս էին
գալիս նորա առաջ և կանչում էին. “Ահա
ես“: Իսկ եօթանասուն չորրորդ անդամին
Նասլաստակը չըկարողացաւ տանել և ոտքերը
տարածեց դաշտի մէջ: Արիւնը վաղեց նորա
կոկորդից և նա այն տեղ իսկ փշեց հսկին:
Ողնին առաւ ձեռք բերած ոսկին ու մի շիշ
օղին, կանչեց կնոջ և ուրախ ուրախ վերա-
դարձաւ նորա հետ իւր տունը. եթէ նոքա

մինչև սյժմ չեն մեռած, ուրեմն սյժմ ևս
կենդանի են: Հայոց մայթայոց ու ազանման
Ահա սյսպէս խարեց Ողնին Նասլաստա-
վին, և սյնալէս շինեց իւր բանը, որ նա
վլաստակութենից լնկաւ մեռաւ. ու այնու-
հիան ոչ մի նասլաստակ ձայնատու չէր լի-
նում վաղելու:

Այս սլատմութեան բարոյականութիւնը
նախ և առաջ այն է, որ մի մարդ որքան և
համարէր իւր անձը երեելի, չըսկէոք է ծի-
ծաղի ուրիշի վերսոյ, թող նա լինի ովնի.
Երկրորդ՝ եթէ դոք կըկամենաք ամուսնա-
նալ, վատ չի լինէր, եթէ լնտրէք այդ կինը
ձեր ազգի միջից ամեն բանով ձեղ նման:
Ուստի եթէ դոք ովնի էք, աշխատեցէք,
որ ձեր ամուսինը ևս ովնուհի լինի, և սյս
ամենայն վիճակի և տեսակի համար:

Արջ և Ցախարէն:

Ա՞ն օր արջը և դայլը ձեմում էին ան-
տառում: Արջը լսեց թոշունի երգեցողու-
թիւն: «Եղբայր դայլ, հարցրեց նա,
ո՞վ է այդ գեղեցիկ երգիչ»:

— «Այդ թոշունների թագաւորն է, սկա-
տասխանեց գայլը, սկզբ է նորա ողջունել»:

Խոկասլէս դա Յախսարեկն էր (*): «Եթէ
այդսլէս է, ասաց արջը, Նորին Միջութիւ-
նը սլարտական է ունենալ պալատ, ցոյց
տուր ինձ»:

— Այդ այդսլէս հեշտ չէ, ինչսլէս որ դու
կարծում ես, ասաց գայլը, Հարկաւոր է
սպասել թագուհու գալստեան:

Ժագուհին եկաւ այդ միջոցին. նա և
թագաւորը բերել էին կտուցքով փոքրիկ
որդեր իւրեանց ձագերը կերակրելու հա-
մար:

Վրջը ուրախութեամբ կ'երթար նոցա
ետևից, բայց գայլը բռնեց նորան ասելով.
«Ո՛չ, սպասենք նոցա դուրս գալուն»: Նո-
քա նկատեցին միայն բունի տեղը և շարու-
նակեցին իւրեանց ձանասլարհը:

Սակայն, արջը չըհանդարտուեցաւ մինչև
որ չըտեսաւ թոշունների թագաւորի սլա-
լատը, ուր և շուտով վերադարձաւ: Թա-
գաւորը և թագուհին այն տեղ չէին, նա
նայեցաւ բունի մէջ և տեսաւ հինգ վեց
հատ ննջած ձագեր: «Միթէ այս է պա-

(*) Roitelet.

Հումը, բացագանցեց նա. սա շատ տխուր
ոլալատ է, իսկ դուք՝ թագաւորի որդիք
չեք, այլ աննշան և այլանդակ ստեղծո-
ւածք:

Փոքրիկ ջախսարեկները շատ բարկացան
լսելով այդ, և սկսան աղաղակել: «Ո՛չ,
արջ. մենք սին տեսակներից չենք, որ դու
կարծում ես, մեր ծնողքը ազնուական են,
դու շատ կըզդջաս այդ անիրաւութեան
համար»: Այս սպառնալիքից արջը և դայլը
երկեւդ կըելով՝ փախան իւրեանց որջերը.
բայց փոքրիկ ձագերը շարունակում էին
աղաղակել և ձիչ բարձրացնել. նոքա ասա-
ցին իւրեանց ծնողքին, որոնք նոցա համար
կերակուր էին բերել: «Արջը եկաւ մեզ
վիրաւորեց, մենք տեղերիցս չենք շարժել
և ոչ մի փշրանք բերաններս չենք դնել, մին-
չև որ մեր պատիւը չըսկահանջես»:

— Ա՞ի անհանգստացէք, ասաց նոցա
թագաւորը, ձեր պատիւը ոտնակոխ չի լի-
նիլ: Եւ թագուհու հետ թոշելով մինչեւ
արջի որջը, կանչեց. «Պարոն արջ, ի՞նչ իրա-
ւունքով վիրաւորել ես իմ զաւակներս.
դորա համար դու պատասխանառու կը լի-
նես, ըստ որում, մենք քո հետ արիւնա-
հեղ պատերազմ կըբանանք»:

Պատերազմը յայտնուեցաւ. արջը կանչեցիւր օդնութիւն չորքոտանիներու գունդը. եղը, կովը, էշը, այծեամը, այծը և բոլոր նոցա նմանները. իւր կողմից ջախսարեկը կանչեց բոլոր օդաթոիկները, ոչ միայն մեծ և փոքր թռչունները, այլ և թեւաւոր միջատները, այսինքն ճանձեր, մժեղներ մելուներ և սկիծակներ։ Որովհետև սկատերազմի օրը մօտանում էր, ջախսարեկը ուղարկեց լրտեսներ իմանալու, թէ ով սկսուի է լինէր թշնամու զօրագլուխը։

Մժղուկը, որ բոլորից փոքրագոյն էր, թռաւ դէսի անտառի այն կողմը, ուր որ թշնամիք հաւաքուելու էին, և սկահուեցաւ մի ծառի տերեկի տակ, որի մօտ խորհրդածութիւն պիտի անէին։ Արջը կանչեց աղուեսին և ասաց.

— Կնքահայր, դու բոլոր կենդանիներից խորամանկն ես. դու կը լինես մեր զօրագլուխը։

— Լաւ, ասաց աղուէսը, բայց ի՞նչ սկայմանական նշան ընդունենք։ Ամենեքեան լուռ մնացին։ Է՛հ, լաւ, շարունակեց նաև ունեմ գեղեցիկ, երկայն, փետուրի սկս թաւամաղ տուտ. քանի որ ես տուտս վեր բռնեմ, կը նշանակէ բանը յաջողակ է գը

նում և դուք առաջ եկէք. բայց երբ որ
իս ցածացնեմ, այդ կը լինի նշանացի ձեզ
փախչելու և աղատուելու:

Ա՞լուկը, որ լաւ լսեց այս, վերադարձ
ձաւ և մանրամասնաբար պատմեց Յախսա-
րեկին:

Երշալյսը բացուածին ակս, չորքոտանիք
վաղեցին սկատերաղմի դաշտը այնսլիսի
սաստիկ դոբիւնքով, որ դետինը շարժում
էր: Յախսարեկը երևեցաւ օդի մէջ իւր զօր-
քով, որոնք բղզում էին, ճշում էին և
այնսլէս թոթոռում էին, որ մարդ կը ցնորիէր
նայելով նոցա վերայ:

— Կատաղութեամբ յարձակուեցան մի-
մեանց վերայ: Բայց Յախսարեկը շտապով
Տրամոյեց Պիծակին գնալ աղուէսի տուտի
տակ կը սկսել և խայթել ամենայն զօրու-
թեամբ: Խայթոյի առաջի հարուածից, ա-
ղուէսը վեր ցատկեցաւ, բայց տուտը դէսի,
վեր բռնած. երկրորդ հարուածին, նա պար-
տաւորուեցաւ մի վայրկեան ցածայնել, իսկ
երրորդ անգամին նա չըկարողացաւ համբե-
րել ու սեղմեց տուտը իւր ոտերի մէջ աղի-
ողուրմ ձայն բարձրացնելով :

Չորքստանիք, տեսնելով այդ, կարծեցին
որ ամենայն ինչ կորած է, և սկսեցին վա-

զել ամենեքեան իւրեանց ծակերը և այս-
պէս թոչունները յաղթող հանդիսացան:

Յագաւորը և թագուհին թոան իւր-
եանց բունը կանչելով . „Յաղթեցինք, յաղ-
թեցինք երեխայք, կերէք և խմեցէք ու-
րախութեամբ:

Ա՛չ, սլատասխանեցին երեխայքը, սլէտք
է որ արջը ինքը դայ ներողութիւն խնդրէ
և ձանաչէ մեր աղնուականութիւնը:

Յախսարեկը թոաւ արջի որջը և ասաց
նորան. Առջ եղբայր, դու պէտք է դաս-
մեր բունը և թողութիւն խնդրես իմ երե-
խաներից և յայտնես որ դու ընդունում ես
նոցա աղնուականութիւնը. ասկա թէ ս՛չ,
զգոյշ եղիր կողքերիդ մասին: Առջը վախե-
ցած, սողոսկելով եկաւ բունը և խնդրեց
թողութիւն: Այնուհետեւ ձագերը վերջա-
պէս հանդստացան և բոլոր երեկոյ ուրա-
խութեան ու ղուարձութեան մէջ անցուցին:

ՊԵՐՃ.

այս և զղմիան ըմանդրան մատցութեան լոյն
շմաբառից բանքաւ զղման աշխատանքն ամբա-
ռայ մատել միշտառան և զղուարանն
ըստ զամբուժաց կացած ամառ ամառ
առ զամբուժ և պատուան ամառան

ՑԱՆԿ.

ԳԼՈՒԽ.	ԵՐԵՎ.
Յառաջաբանութիւն	5
1 Պարիկների սլարդելը	11
2 Երեելի կախարդ	16
3 Փոլձանք	22
4 Մեծ Հայր և Թոռն	24
5 Երկայնակեցութիւն	25
6 Վեց հոգի կը հասնենք ամեն բանի	30
7 Նալաստակ և Ողնի	40
8 Արջ և Ցախսարեկ	47



WED

11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100
101
102
103
104
105
106
107
108
109
110
111
112
113
114
115
116
117
118
119
120
121
122
123
124
125
126
127
128
129
130
131
132
133
134
135
136
137
138
139
140
141
142
143
144
145
146
147
148
149
150
151
152
153
154
155
156
157
158
159
160
161
162
163
164
165
166
167
168
169
170
171
172
173
174
175
176
177
178
179
180
181
182
183
184
185
186
187
188
189
190
191
192
193
194
195
196
197
198
199
200
201
202
203
204
205
206
207
208
209
210
211
212
213
214
215
216
217
218
219
220
221
222
223
224
225
226
227
228
229
230
231
232
233
234
235
236
237
238
239
240
241
242
243
244
245
246
247
248
249
250
251
252
253
254
255
256
257
258
259
259
260
261
262
263
264
265
266
267
268
269
270
271
272
273
274
275
276
277
278
279
280
281
282
283
284
285
286
287
288
289
289
290
291
292
293
294
295
296
297
298
299
299
300
301
302
303
304
305
306
307
308
309
309
310
311
312
313
314
315
316
317
318
319
319
320
321
322
323
324
325
326
327
328
329
329
330
331
332
333
334
335
336
337
338
339
339
340
341
342
343
344
345
346
347
348
349
349
350
351
352
353
354
355
356
357
358
359
359
360
361
362
363
364
365
366
367
368
369
369
370
371
372
373
374
375
376
377
378
379
379
380
381
382
383
384
385
386
387
388
389
389
390
391
392
393
394
395
396
397
398
399
399
400
401
402
403
404
405
406
407
408
409
409
410
411
412
413
414
415
416
417
418
419
419
420
421
422
423
424
425
426
427
428
429
429
430
431
432
433
434
435
436
437
438
439
439
440
441
442
443
444
445
446
447
448
449
449
450
451
452
453
454
455
456
457
458
459
459
460
461
462
463
464
465
466
467
468
469
469
470
471
472
473
474
475
476
477
478
479
479
480
481
482
483
484
485
486
487
488
489
489
490
491
492
493
494
495
496
497
498
499
499
500
501
502
503
504
505
506
507
508
509
509
510
511
512
513
514
515
516
517
518
519
519
520
521
522
523
524
525
526
527
528
529
529
530
531
532
533
534
535
536
537
538
539
539
540
541
542
543
544
545
546
547
548
549
549
550
551
552
553
554
555
556
557
558
559
559
560
561
562
563
564
565
566
567
568
569
569
570
571
572
573
574
575
576
577
578
579
579
580
581
582
583
584
585
586
587
588
589
589
590
591
592
593
594
595
596
597
598
599
599
600
601
602
603
604
605
606
607
608
609
609
610
611
612
613
614
615
616
617
618
619
619
620
621
622
623
624
625
626
627
628
629
629
630
631
632
633
634
635
636
637
638
639
639
640
641
642
643
644
645
646
647
648
649
649
650
651
652
653
654
655
656
657
658
659
659
660
661
662
663
664
665
666
667
668
669
669
670
671
672
673
674
675
676
677
678
679
679
680
681
682
683
684
685
686
687
688
689
689
690
691
692
693
694
695
696
697
698
699
699
700
701
702
703
704
705
706
707
708
709
709
710
711
712
713
714
715
716
717
718
719
719
720
721
722
723
724
725
726
727
728
729
729
730
731
732
733
734
735
736
737
738
739
739
740
741
742
743
744
745
746
747
748
749
749
750
751
752
753
754
755
756
757
758
759
759
760
761
762
763
764
765
766
767
768
769
769
770
771
772
773
774
775
776
777
778
779
779
780
781
782
783
784
785
786
787
788
789
789
790
791
792
793
794
795
796
797
798
799
799
800
801
802
803
804
805
806
807
808
809
809
810
811
812
813
814
815
816
817
818
819
819
820
821
822
823
824
825
826
827
828
829
829
830
831
832
833
834
835
836
837
838
839
839
840
841
842
843
844
845
846
847
848
849
849
850
851
852
853
854
855
856
857
858
859
859
860
861
862
863
864
865
866
867
868
869
869
870
871
872
873
874
875
876
877
878
879
879
880
881
882
883
884
885
886
887
888
889
889
890
891
892
893
894
895
896
897
898
899
899
900
901
902
903
904
905
906
907
908
909
909
910
911
912
913
914
915
916
917
918
919
919
920
921
922
923
924
925
926
927
928
929
929
930
931
932
933
934
935
936
937
938
939
939
940
941
942
943
944
945
946
947
948
949
949
950
951
952
953
954
955
956
957
958
959
959
960
961
962
963
964
965
966
967
968
969
969
970
971
972
973
974
975
976
977
978
979
979
980
981
982
983
984
985
986
987
988
989
989
990
991
992
993
994
995
996
997
998
999
999
1000

th.

